

գրքերն էին Վարք Հարանց, Յայսմաուրք եւ պատմագիրներ՝ յանուանէ Միքայէլ Ասորի, Թովմաս Մեծոփեցի եւն: Ունէր գեղեցիկ մուրաթիւնը հաւաքելու գրքեր. նոյն իսկ երկար ճանապարհի վրայ ունէր իւր հետը «ճամատանով գրեանք», որոնք, երբ 1612ին ի Զմիւռնիա վտանգի մատնուեցան, «յոյժ տրտում եւ տխուր» կը թողուն զինքը, «զի պայլ ինչ այնպէս չհոգայի, կ'ըսէ, որպէս գրեանքս» (Ուղ. 184):

Տեսայ ի Լվով Համալսարանի Մատենադարանին մէջ Գանձարան-Տաղարան մը, որ ունէր Սիմէոնի գրչէն հետեւեալ յիշատակագրութիւնը. «Արգ ի Թվ. ՌԾԵ (1606) ապրիլ 15... ես անպիտան եւ յանարժան Սիմէոն դպիրս... գնեցի զսա ի հալալ ընչից եւ յարդար վատտակոցս, յիշատակ ինձ եւ իմ ծնողացս». տես վարը, էջ 387:

Հաւանօրէն 1607ին կը թողու Սիմէոն իւր հայրենի տունն ի Զամոսցա եւ կը հասնի Լվով: Ի վաղուց հետէ կը տանջէր զինքը սուրբ փափագ մը՝ երթալ ուխտագնացութեամբ հեռաւոր սրբավայրեր, որոնց մասին լսած կամ կարդացած էր: Այս մասին թող խօսի ինքը. «Նրբեմն ընթերցեալ իմ զՎարս հարանց եւ զՊատմութիւնս վիպասանաց, անկաւ ի սիրտ իմ փափագ եւ ջերմ սէր... ի բազում ամաց եւ ի վաղուց հետէ... չըջագայիլ եւ տարաշխարհիկ լինել յօտար եւ յանձանօթ դաւառան եւ ի սփիւռս հեթանոսաց: